*ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտնում է*

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ–ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՈՏՈՒՄ

Օգոստոսի 18–ին Իջևան–Ղազախ սահմանագոտում տեղի ունեցավ Հելսինկյան քաղաքացիական միջազգային համաժողովի ներկայացուցիչների հանդիպում, որին մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂՀ–ի համանուն կազմակերպության կանանց և երիտասարդության պատվիրակությունները: Կողմերը պայմանավորվեցին ըստ ամենայնի աջակցել խաղաղության շուտափույթ հաստատմանը, ռազմագերիների և պատանդների (հատկապես կանանց և երեխաների) փոխանակությունն արագացնել, դիմել բոլոր շահագրգիռ կազմակերպություններին, ճշտել պատանդների տեղը և թիվը: Որպես այդ ուղղությամբ ձեռնարկվող գործնական քայլ, ԼՂՀ–ի ներկայացուցիչները ադրբեջանական պատվիրակությանը միակողմանիորեն հանձնեցին 35–ամյա մի ադրբեջանուհու իր երկու զավակների հետ: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև մշակութային, առողջապահական և այլ բնագավառների մասին չեզոք լրատվության փոխանակելու, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական հիմունքների վերաբերյալ պարբերական գիտաժողովներ անցկացնելու մասին:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, ԼՂՀ–ի և Ադրբեջանի պատվիրակությունների ղեկավարներ, Հելսինկյան քաղաքացիական միջազգային համաժողովի հայ համանախագահներ Անահիտ Բայանդուրը, Կարեն Օհանջանյանը, ինչպես նաև Արզու Աբդուլաևան:

Ըստ «Փաստ» լրատվական գործակալության՝ հաջորդ հանդիպումը նախատեսվում է անցկացնել սեպտեմբերին Շուշիում: